«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Ընտանիքի հոգեբանություն

կոնֆլիկտներ

Առարկան՝ Հայոց լեզու և գրականություն

Հետազոտող ուսուցիչ՝ Գայանե Հարությունյան

Ուսումնական հաստատություն՝ Երևանի հ. 116 հիմնական դպրոց

Երևան 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն……...……2

Ընտանիք, նրա տեսակներն ու ֆունկցիաները…….…..……3-6

Ներընտանեկան դերային կառուցվածքի և միջանձնային հաղորդակցության խաթարումները.....7-11

Կոնֆլիկտներ……12-15

Եզրակացություն……...……16-17

Օգտագործված գրականության ցանկ……..…18

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հասարակության մեջ ընտանիքի դերը անհամեմատելի է այլ սոցիալական ինստիտուտների հետ, քանի որ հենց ընտանիքում է ձևավորվում և զարգանում անձը, տեղի է ունենում նրա կողմից սոցիալական դերերի յուրացում, որն անհրաժեշտ է հասարակության մեջ նրա բարեհաջող ադապտացիայի համար: Հենց ընտանիքում է դրվում անձի բարոյական զարգացման հիմքը, ձևավորվում վարքի նորմերը, բացահայտվում անձի գծերը և ներաշխարհը:

Ընտանիքը դասվում է սոցիալական այն երևույթների շարքին, որոնք գոյատևում են հասարակության գոյության հետ մեկտեղ: Լինելով հասարակության կարևորագույն օղակ՝ ընտանիքը կոչված է բավարարելու հասարակության հիմնական պահանջմունքները և գործառնելու հասարակական լայն համակարգում՝ արտացոլելով վերջինիս զարգացումը, հակասությունն ու ճգնաժամը:

Պատմականորեն ձևավորված խմբերի մեջ ընտանիքը, թերևս, ամենակայունն է և երկար ժամանակ կմնա այդպիսին, քանի դեռ այն լավագույն ձևով բավարարում է մարդկանց բազմաթիվ համադրված պահանջմունքները:

Բազմազան ու բազմաբնույթ են ընտանեկան բախումները թե՛ ծագմամբ, թե՛ կառուցվածքով, թե՛ նշանակությամբ: Լինելով ներընտանեկան լարվածության սոցիալ-հոգեբանական դրսևորումներ՝ բախումները խարխլում, վտանգում են ընտանիքի կայունությունը:

Մեր հետազոտական աշխատանքի նպատակն է ուսումնասիրել ընտանիքի ֆունկցիոնալ կառուցվածքն ու տեսակները, մեկնաբանել ընտանիքում դերային կառուցվածքի խաթարման պատճառները, առաջացած կոնֆլիկտները:

ԸՆՏԱՆԻՔ, ՆՐԱ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ՖՈՒՆԿՑԻԱՆԵՐԸ

Մարդկային քաղաքակրթությունը ստեղծել է բազմաթիվ արժեքներ, որոնց շարքին պետք է դասել նաև ընտանիքը: Ընտանիքը կատարում է այն կարևորագույն գործառույթներից մեկը, որը ուղեկցում է ողջ կյանքի ընթացքում: (ШнейдерЛ. Б.Семейнаяпсихология: Учеб.пособиедлявузов-Изд. 3-е.: АкадемическийПроект: Екатеринбург: Деловаякнига, 2007.-736с.)(էջ23)

Ընտանիքը համակարգային մոտեցմամբ դիտվում է որպես բաց ինքնաձևավորվող սոցիալական համակարգ, որը գտնվում է շրջակա միջավայրի հետ անընդհատ փոխկապակցվածության մեջ: Ընտանիքի գործունեությունը պայմանավորված է երկու հիմնական գործոններով՝ հոմեոստազի օրենքով և զարգացման օրենքով: Վերջինս նշանակում է, որ ընտանիքը այնպես, ինչպես ցանկացած այլ համակարգ, կարող է բնութագրվել պատմական ասպեկտի շրջանակներում՝ գենեզիս, զարգացում և լիկվիդացիա տերմինների միջոցով: ШнейдерЛ. Б. Семейнаяпсихология: Учеб.пособиедлявузов-Изд. 3-е.: АкадемическийПроект: Екатеринбург: Деловаякнига, 2007.-736с.)(էջ184)

Գոյություն ունեն ընտանիքի կառուցվածքի բազմաթիվ տեսակներ՝

Կախված ընտանիքի անդամների քանակից՝ առանձնացնում ենք ընտանիքի հետևյալ տեսակները՝

1. Նուկլենար ընտանիք: Սա ամուսիններն են և նրանց երեխաները: Նուկլենար ընտանիքը տիպիկ 20-րդ դարի ընտանիք է, որը փոխարինելու է եկել նահապետական ընտանիքներին, որտեղ մի քանի սերունդներ և հեռավոր բարեկամներ բնակվում էին միասին:
2. Ընդարձակ ընտանիք, որտեղ ամուսիններին և նրանց երեխաներին միանում են ավագ սերունդի ներկայացուցիչները:

3. Կիսատ ընտանիք, որտեղ ամուսնալուծության կամ մահվան պատճառով ամուսիններից մեկը բացակայում է: Կիսատ ընտանիքի տիպիկ օրինակ են համարվում միայնակ մայրերը:
4. Ֆունկցիոնալ կիսատ ընտանիք լինելու պատճառ հանդիսանում է ամուսիններից մեկի բացակայությունը:Այսպիսով ամուսնալուծված զույգը շարունակո ւմ է նյութապես ապահովել ընտանիքին: Մինչդեռ ամուսնալուծված հայրը, ի տարբերություն մահացած հոր, հաճախ է ենթարկվում քննադատության:

Ընտանիքը, ինչպես ցանկացած համակարգ, իրականացնում է մի շարք ֆունկցիաներ, որոնք արտացոլում են ինչպես ընտանիքի մշակութային –պատմական զարգացման բնույթը, այնպես էլ նրա կյանքի շրջանառության փուլերի յուրահատկությունները՝

1. Տնտեսական,տնտեսա-առօրեական- նախաարդյունաբերական համակարգում ընտանիքը համարվում էր առաջնային արդյունաբերող խումբ, որն ապահովում էր իր գոյության բոլոր հիմնական նյութական պայմանները կամ ստեղծում էր մթերքներ փոխանակման համար: Մեր օրերում ընտանիքի տնտեսական ֆունկցիան որոշվում է իր անդամների ունեցած եկամուտների միավորմամբ և այն բանով, որ այդ հասույթները դասակարգվում են ընտանեկան պահանջների ընտանիքի յուրաքանչյուր անդամի ունեցած պահանջին համապատասխան: Ընտանիքի տնտեսա-առօրեական ֆունկցիան իրականացվում է ընտանիքի առօրյային նրա յուրաքանչյուր անդամի անհատական առօրյայի կազմակերպման ձևի մեջ: Տնային պարտականությունների բաշխումը և դրանց պահպանումը պայմանավորված են պատմական ժամանակաշրջանով, կյանքի պայմաններով, ընտանիքի կազմով և նրակ յանքի շրջանառության փուլով:

2. Վերարտադրողական (ռեպրոդուկտիվ)-(երեխաների ծնունդը կամ բնակչության վերարտադրումը): Ա. Գ. Խարչևը այս ֆունկցիան համարում է սոցիալապես կարևորագույն գործառույթ, որն ապահովում է երկրի բնակչության վերարտադրումը: Այս ֆունկցիայի կարևորությունը գիտակցում էր դեռևս Հին Հռոմի հասարակությունը, որտեղ Ավգուստ ղեկավարի կառավարման տարիներին արձակել են օրենքներ, որոնք ազդակ էին հանդիսանում հռոմեացիների ընտանիքներում երեխաների ծնվելու համար (Զացեպին,1997): Ծնելիության և բնակչության վերարտադրման պլանավորման խնդիրների լուծումը համարվում է պետական քաղաքականության կարևոր գործառույթ համարյա բոլոր երկրներում, անկախ այն բանից՝ բախվում են արդյոք այդ երկրները ծնելիության ճգնաժամի կամ «դիֆիցիտի» հետ, թե՝ ոչ:
3. Երեխաների դաստիարակման գործառույթ- Ընտանիքը համարվում է երեխայի սոցիալիզացման առաջնային համակարգ: Այն ապահովում է հասարակության զարգացման մշտականությունը, մարդկային ծնունդի շարունակությունը, ժամանակների կապը: Երեխայի տարիքի հետ ընտանիքի դաստիարակչական ֆունկցիան ոչ թե կորցնում է իր նշանակությունը, այլ պարզապես փոխվում են դաստիարակման խնդիրները, միջոցներն ու մոտեցումները, ծնողների հետ համագործակցության ձևերը:
4. Սեքսուալ-Էրոտիկ-Յուրահատուկ և անկրկնելի անհատականություն հանդիսացող մշտական կողակցի հետ ունեցած ստաբիլ հարաբերություններն են միայն, որ ստեղծում են պայմաններ, որպեսզի զույգը կարողանա հասնել առավել լիարժեք սեքսուալ հարմոնիայի կամ ներդաշնակության:

5. Հոգևոր շփման գործառույթ-Սրա էությունն այն է, որ այն ենթադրում է ընտանիքի անդամների հոգևոր հարստացում, ինֆորմացիայի փոխանակում, անհատի համար սոցիալ-քաղաքական, մասնագիտական, հասարակական կյանքի կարևորագույն խնդիրների քննարկում, Արվեստի գրական և գեղարվեստական գործերի դաստիարակման ենթատեքստի վրա հիմնված շփում, ընտանիքի անդամների անհատական և ինտելեկտուալ աճի համար պայմանների ստեղծում:
6. Էմոցիոնալ աջակցման և ընդունման գործառույթ, որը ապահովում է անվտանգության և խմբի նպատակ անելու զգացումը, էմոցիոնալ փոխըմբռնումը, կամ, այսպես կոչված, հոգեթերապևտիկ գործառույթը:
7. Ռեկրեատիվ(վերականգնողական)- Ընտանիքի անդամների նյարդահոգեբանական և հոգեկան կայունության վերականգնման պայմանների ապահովման ֆունկցիա:
8. Խնամակալության, հսկողության և սոցիալական կարգավորման գործառույթ (ընտանիքի անչափահաս և անկարող անդամների հանդեպ (Զացեպին,1991, Էյդեմիլլեր, Յուստիցկիս,1999)

Ըստ Ի. Վ. Գրեբեննիկովայի նույնպես՝ (АндреевaТ. В.Семейнаяпсихология: Учеб. пособие. —СПб.: Речь, 2004. — 244 с.)(էջ44) ընտանիքի հիմնական ֆունկցիաներն են՝ վերարտադրողական (կյանքի շարունակուն, երեխայо ծնունդ, մարդկային ցեղի շարունակություն), տնտեսական, դաստիարակչական, կոմունիկատիվ:

Մ. Ս. Մացկովսկին այս ֆունկցիաներին ավելացնում է հետևյալները՝ սոցիալ-կանոնադրականությունը, սեքսուալությունը, հոգեկան շփումը:

Ընտանիքի զարգացման կենսաշրջանը որոշվում է օբյեկտիվ իրավիճակներով (ծնունդ, մահ) և իրականացվում է ընտանիքի բոլոր անդամների տարիքային փոխհարաբերությունների ենթատեքստում: Ընտանեկան կյանքի առաջացման

փուլերի ժամանակաշրջանների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ նրանք բոլորը հիմնված են ընտանիքում երեխաների դիրքի փոփոխման, ինչպես նաև ամուսինների կողմից դաստիարակչական գործառույթի իրականացման կրիտերիայի վրա: (ШнейдерЛ. Б. Семейнаяпсихология: Учеб.пособиедлявузов-Изд. 3-е.: АкадемическийПроект: Екатеринбург: Деловаякнига, 2007.-736с.)(էջ184)

Ներընտանեկան դերային կառուցվածքի և միջանձնային հաղորդակցության խաթարումները

Դերային վարքագծի հետ սերտորեն կապված է ներընտանեկան իշխանության բաշխումը: Ընտանիքի իշխանական կառույցը մի շարք փոփոխություններ է ապրել պատմության ընթացքում՝ պայմանավորված ընտանիքի դերային կառույցի փոփոխությամբ և հասարակական արտադրության ոլորտում կանանց ներգրավվածությամբ:

Ամուսինների փոխադարձ իրավունքներից և պարտականություններից էր տնտեսվարությունը միատեղ վարելը: Ամուսինը տանտերն էր, տան կամ ընտանիքի տերը, նրա գլուխն ու կառավարիչը: Սակայն հայ ընտանիքում տան ու տեղի ղեկավարման խնդրում գործում էր իշխանության բաժանման սկզբունքը: Ընտանիքի ներսում կատարվում էր աշխատանքի բաժանում: Այս բաժանման համաձայն՝ ընտանիքի գլուխը ստանձնում էր դրսի հետ կապված ընտանիքի նյութական և ապահովող տնտեսական գործունեությունը, իսկ կինը՝ տան ներքին տնտեսական աշխատանքը: Աշխատանքի կառավարման ոլորտների նման ներքին բաժանումն անդրադառնում էր կնոջ դրության և իրավական կեցության վրա: Այդ կեցությունը խոր իմաստ ձեռքերպում է ստացել ժողովրդական բանահյուսության մեջ. «Տղամարդը որ կա՝ դրսի պատ է, կինը՝ ներսի պատ»: Տանտիրուհու հիմնական

տնտեսական պարտականությունն էր սննդամթերքի պահպանումն ու սերնդի դաստիարակության գործի կազմակերպումը (Ա. Հովհաննիսյան , Ամուսնա-ընտանեկան իրավունքը վաղ ավատական Հայաստանում, Երևան,1976):

Ընտանեկան հարաբերությունները պետք է բնութագրեն մտերմություն, յուրահատուկ տակտիկա, փոխադարձ զիջողականություն, ձգտում, որպեսզի յուրաքանչյուրը կատարի իր պարտականությունները: Այդպիսի հարաբերությունների ձևավորման և ամբողջական զարգացման ու ընտանիքում երեխայի դաստիարակության համար կարևոր նշանակություն ունեն հայրիկի և մայրիկի դերերը, և թե նրանք ինչպես են այն ընկալում (ЭйдемиллерЭ. П., ЮстицкийВ. В. ‘Семейнаяпсихотерапия’Ленинград 1990г.):

Ընտանիքի դերային կառուցվածքում առանձնացնում են կոնվենցիոնալ դերերի պլան և միջանձնային դերերի պլան:

Կոնվենցիոնալ դերերը պայմանավորված են սոցիալ- մշակութային միջավայրով, կանոնակարգված են, որոշում են մարդու հիմնական իրավունքներն ու ընտանիքի անդամների պարտականությունները:

Միջանձնային դերերը անհատականացված են, որոշվում են ընտանիքում միջանձնային հարաբերությունների կոնկրետ բնույթով՝ պարունակելով իր մեջ ընտանեկան միջանձնային հարաբերությունների յուրահատուկ փորձ:

Ընտանիքի դերային կառուցվածքը ապահովում է նրա արդյունավետ գործունեությունը և ընտանիքի բոլոր անդամների պահանջների բավարարումը:

Կոնվենցիոնալ դերերի դասակարգման ժամանակ նկատվում է սեռադերային տարբերակում, որը որոշվում է հասարակությունում և ընտանիքում տղամարդու և կնոջ դերերի մասին ամուսինների պատկերացումների յուրահատկություններով: Միջանձնային դերերը որոշում են միջանձնային փոխազդեցության բնույթը, ներառյալ խնամակալի, խնամակալվողի, ընկերոջ, սեքսուալ զուգընկերոջ դերերը:

Հայրիշխան հասարակարգում կնոջը միշտ վերագրում էին «տնային տնտեսուհի» և «տան օջախի պահպանողի» դերերը: Այս նորմատիվ դերերը մինչև այժմ ընդունված են որպես կնոջը բնորոշ դերեր, որոնցով էլ որոշվում են նրա կանացիությունը և գենդերային դերը, և վերջապես՝ դրանց միանմանությունը: Ընտանեկան և մասնագիտական ոլորտներում կնոջ ունեցած մասնակցության հանդեպ համակարծիք վերաբերմունքը պայմանավորված է երկու հանգամանքներով: Նախնառաջ, թույլ սեռի արտադրողական ակտիվությամբ, որն անհրաժեշտ պայման է հասարակության կենսագործունեության և սոցիալական առաջընթացի համար: Մյուս կողմից՝ կնոջ բարձրագույն առաքելությամբ. դրանք են՝ տան հարցերով, երեխաներով զբաղվելը և հոգատար վերաբերմունքը ընտանիքի հանդեպ:

Դերային կոնֆլիկտի ցուցանիշներ են համարվում ամուսնու կողմից կնոջ աշխատանքի հավանության և աջակցության բացակայությունը, նրա մասնագիտական գործունեության հանդեպ անհարգալից վերաբերմունքը, մեղքի զգացումը ընտանիքի հանդեպ, որն առաջանում է աշխատող կնոջ մոտ, ընտանիքի և աշխատանքի միջև տարանջատված լինելու զգացողությունը: (Карабанова О. А. Психология семейных отношений: 2007. — 122 с.) (էջ79-86): Բոլոր ժամանակներում էլ ընտանիքում հայրիկի դերը անփոխարինելի է եղել: Ինչպես արդեն նշվեց, բնությունը և հասարակությունը յուրաքանչյուր տղամարդու նախապատրաստում է ամուսին և հայր դառնալու, իսկ կնոջը՝ կին և մայր դառնալու. մարդը միշտ մտածում է, որ երբ կյանքից հեռանա, իրենից հետո ինչ-որ բան թողնի: Տղամարդը ամուսնանալով իր վրա է վերցնում մեծ պատասխանատվություն՝ լինել հայր և ընտանիքի հենարան:

Հայրությունը տղամարդու սոցիալական և բարոյական հասունության քննությունն է: Միշտ կան երիտասարդ մարդիկ, որոնք ամուսնանում են, սակայն վախենում են հայր դառնալուց կամ էլ դեռևս պատրաստ չեն դրան: Երեխան մեծ փորձություն է, հատկապես ընտանիքի ամրապնդման համար: Պրակտիկայում

հանդիպում են դեպքեր, երբ զույգերը մինչև առաջին երեխայի ծնունդը ապրում են համերաշխ, իսկ նրա ծնվելուց հետո նրանց հարաբերությունները վատանում են: Ամուսինը սկսում է ավելի հաճախ բացակայել տնից, փախչում է երեխայից և կնոջից: Դա կարող է վկայել հոր զգացմունքների կամ հայրական կուլտուրայի ոչ ամբողջական զարգացած լինելու մասին:

Արդարացի կլինի նշել, որ հայրական զգացմունքը ծնվում է ավելի ուշ, քան մայրականը: Արիստոտելը նշում է, որ իրականում տղամարդիկ հայրեր դառնում են ավելի ուշ, քան կանայք՝ մայրեր: Հաճախ նրանց մոտ առաջանում է հոգեկան զարգացման սեփականություն, որոնք ուզում են երկրի վրա իրենց շարունակող ժառանգներ ունենալ (Дивицина Н. Ф. ՝Семьеведение՝ Москва 2006г):

Գտնվելով երեխաների կողքին՝ հայրը ցույց է տալիս իր լավագույն որակները՝ բարությունը, հավատարմությունը, գթասրտությունը: Այդ իմաստով ոչ միայն հայրերն են դաստիարակում երեխաներին, այլ նաև երեխաները՝ հայրերին: Հայրն ընտանիքին հարկավոր է ոչ միայն պատժելու, այլ նաև ամեն ինչում երեխային աջակցելու համար. նա պետք է իր երեխայի համար ընկեր լինի:

Երեխային դաստիարակելու ժամանակ շատ կարևոր է հոր կենդանի օրինակը: Տղա երեխաները ամեն ինչում նմանակում են հոր կյանքի նկարագիրը և նրա գաղափարները, ընդօրինակում են նրա քայլվածքը, խոսելաձևը, միմիկաներն ու հաստատունությունը: Երեխաները իրենց հայրերից ընդօրինակում են այնպիսի որակներ, ինչպիսիք են հոգու ամրությունը, ուժը, տղամարդկային հուսալիությունը, նախաձեռնողականությունը, հակառակ սեռի հետ շփվելու ձևերը: Եթե հայրը ուշադիր են մայրիկի նկատմամբ, ապա ամուսնանալով տղան էլ աշխատում է հնարավորինս նույն կերպ վերաբերվել իր ընտրյալին: Եթե հայրը աշխատանք կատարելիս հեռանում է, ապա այդ սովորությունը ընդօրինակում են և երեխաները (Хоментаускас Г. Т. , Семья глазами ребенка, Москва 2003г.):

Ընտանիքում մեծ և անփոխարինելի նշանակություն ունի մայրը: Մայրությունը կնոջ սոցիալական դերերից մեկն է, այդ իսկ պատճառով էլ, անգամ եթե ցանկություն կա մայր դառնալու, ապա հասարակական նորմերն ու արժեքները առանձնահատուկ ազդեցություն ունեն մայրական վերաբերմունքի ի հայտ գալու վրա: Մայրական զգացողությունը ներառում է կենսաբանական առաջխաղացում դեպի մայրությունը՝ երանգավորելով կամ վերափոխելով ներքնայնացված սոցիալական նորմերը (Практиечскаяпсихология: от фундаментальных исследований доиновации՝ Международная научно–практическая конференция,Тамбов 2007г):

«Մայրական վերաբերմունքի նորմեր» հասկացությունըմշտապես հանդես չի գալիս այնպես, ինչպես մոր խնամակալության կողմնորոշումը, որը փոխվում է դարից դար: Մայրական վերաբերմունքի փոփոխվելը միշտ էլ գոյություն է ունեցել, սակայն նրանք կարող են կրել թաքուն կամ բացահայտ դրսևորումներ և ուղեկցվում են շատ կամ քիչ մեղավորության զգացումով՝ կախված այդ փաստերի նկատմամբ հասարակության վերաբերմունքից:

Մայրությունը, ըստ Տ. Ֆլորենսկիի, կնոջ կոչումն է, այդ իսկ պատճառով էլ կարելի է ասել, որ կնոջ գլխավոր ցանկությունը մայր դառնալն է: Դ. Վինիկոտը գրում է, որ կնոջ կարևորագույն առանձնահատկություններից է «լինել հնարավորինս լավ մայր», ինչն էլ ձևավորվում է իր սեփական մոր հետ փոխազդեցության փորձի սկզբունքի հիման վրա և՛ խաղի մեջ, և՛ մանկության տարիներին փոքր երեխաների հետ փոխազդեցության ժամանակ, ինչպես նաև հղիության ընթացքում և մայրության ժամանակ: Կինը մայրություն չի կարող սովորել ո՛չ գրքերից, ո՛չ էլ բժիշկներից: Նրա գիտությունը սեփական փորձի վրա հիմնվելն է: Բացի այդ, նա հետևում է, թե ինչպես են այլ ծնողներ խնամում իրենց երեխաներին, նա նաև շատ բաներ սովորում է դեռ վաղ մանկության տարիքում՝ խաղալով «Մայր-երեխա» խաղը: Չինաստանում գոյություն ունեն խոսակցություններ այն մասին, որ աղջիկները չեն դառնա լավ մայրեր, եթե չսիրեն իրենց ապագա երեխային դեռևս իրենց մանկության ժամանակ (Шнейдер Л. Б. Семейная психология, 2007):

Համաձայն Ա. Յանկովայի, Ե. Աշիլովայի (Шнейдер Л. Б., Психология семейных отношений, Москва 2000г.) (էջ 106) հետազոտությունների՝ ընտանիքի կայունության անհրաժեշտ պայման է ամուսիններից մեկի ղեկավարումը ընտանիքում: Ղեկավարումը ենթադրում է պատասխանատվություն նրանց համար, ովքեր ենթարկվում են:

Ընտանիքում իշխանության խնդրի հետազոտումը ներառում է լիդերի խնդրի հետազոտում: Ընտանիքում լիդերի խնդիրը քննարկված է մի շարք հետազոտողների կողմից: Սոցիոլոգ Ն. Շիմինը հետազոտությունների օգնությամբ գալիս է այն եզրակացության, որ ընտանիքի կայունության տեսանկյունից նախընտրելի է մեկ լիդերով ընտանիքը՝ մերժելով հայրիշխան տեսակը և առաջադրելով լիդեր բարոյական հեղինակության և ամուսինների իրավահավասարության վրա հիմնվելու գաղափարը:

ԿՈՆՖԼԻԿՏՆԵՐ

Դոկտոր Բատերֆիլդը գրում է. «Երջանիկ ամուսնությունը հազվադեպ է լինում պատահականություն, այն գիտակցական աշխատանքի հետևանք է, խելացի և մտածված ծրագրավորման արդյունք»: Ամուսնական կյանքը անհնար է առանց կոնֆլիկտների: Չկան միանգամայն նույն դաստիարակության, արժեքային համակարգով և մտածողությամբ մարդիկ, ինչն էլ շատ հաճախ չհասկացվածության և ամուսինների միջև ծագող անախորժությունների և կոնֆլիկտների պատճառ է դառնում:

1. Սեռական անբավարարվածության հետ կապված կոնֆլիկտներ:

2. Զուգընկերոջ արժանապատվությունը վիրավորելու, անընդհատ քննադատելու հետ կապված կոնֆլիկտներ:

3.Կոնֆլիկտներ, որոնք ծագում են ամուսինների՝միմյանց հանդեպ անհրաժեշտ քնքշանքի, ուշադրության և հոգատարության բացակայությունից:

4. Ֆինանսապես անապահով լինելու կամ ընտանեկան բյուջեն սխալ բաշխելու հետ կապված կոնֆլիկտներ:

5.Երեխաների դաստիարակության և ամուսիններից յուրաքանչյուրի սոցիալական դերերի ստանձման վերաբերյալ պատկերացումների տարբերություններ:

Ընտանիքում ծագած կոնֆլիկտը կարելի է հաղթահարել, եթե հաշվի առնվեն անհատական առանձնահատկությունները: Կոնֆլիկտները ընտանիքի և ամուսիններից յուրաքանչյուրի անձի զարգացման կամ քայքայման հիմքն են, սակայն դա մեծապես կախված է նրանից, թե ինչպիսի կոնֆլիկտի է ընտանիքը բախվում, որքան է այն տևում և ինչ մեթոդներ են ընտրում ամուսինները կոնֆլիկտի լուծման համար: Կոնֆլիկտների լուծման գործընթացը կհեշտանա, եթե դրանք լինեն հետևյալ տիպի՝ակնհայտ, կառուցողական, կարճատև և իրատեսական:

Ամուսնական կոնֆլիկտներն ունեն իրենց յուրահատկությունները: Եթե ամուսինների կենսագործունեության մեջ կան ոլորտներ, որտեղ նրանց հետաքրքրությունները, պահանջմունքները, մտադրություններն ու ցանկությունները բախվում են՝ առաջ բերելով առավել ուժեղ և երկարատև բացասական վիճակներ, ապա այդ ամուսնական միությունները դառնում են կոնֆլիկտային: Ընտանեկան կոնֆլիկտների պատճառներն են .

1. Ֆոնային պատճառներ - Սոցիալ-քաղաքական և սոցիալ-տնտեսական, որոնք ազդում են ընտանիքի անդամների արժեքային կողմնորոշումների, ընտանիքի կենսամակարդակի, նրա նյութական-կենցաղային վիճակի վրա:

2. Սոցիալ-հոգեբանական-Միջդերային կոնֆլիկտներ՝ կապված պարտականությունների բաժանման, ընտանեկան բյուջեի կարգավորման և այլ հարցերի հետ:

3. Բարոյահոգեբանական-Դավաճանություն, ստախոսություն, երկակի չափանիշներ:

4. Անհատական-հոգեբանական-առողջական տարբերություններ, սեռական և հոգեբանական խնդիրներ և այլն:

Խանդը կարող է հանդիսանալ ամուսնալուծության պատճառ, հակառակ դեպքում կյանքը կվերածվի դժոխքի: Նման խանդի դրսևորման ձևերից են ագրեսիվ գործողությունները՝ ծեծը, զուգընկերոջը հետևելը, տնից դուրս գալու արգելքը,սպանությունը և այլն:

Խանդը հաճախ ծագում է որպես ամուսնության քայքայման վտանգ, այդ վտանգի զգացումը խանդի պայմաններից մեկն է, քանի որ ամուսնության իրական քայքայման դեպքում ծագում է վշտի ռեակցիա: Վտանգը կարող է լինել իրական, երբ գոյություն ունի իրական մրցակից, և կարծեցյալ, երբ մրցակցի առկայությունը հիմնված է ենթադրությունների վրա՝ առաջացած զուգընկերոջ զգացմունքների սառեցման, կասկածի կամ հակասական վարքի, կամ էլ հարաբերությունների բնույթի մասին ինֆորմացիայի բացակայության հետևանքով: Կարծեցյալ մրցակցի դեպքում խանդը հեշտությամբ դառնում է պաթոլոգիական՝ զառանցային: Պաթոլոգիական խանդը բնութագրվում է իրավիճակի ընկալման անհամարժեքությամբ պարզորոշ չէ հենց սուբյեկտի համար, և նա չի կարող դա վերահսկել:

Դավաճանության ռեակցիաները հիմնված են զուգընկերոջ նկատմամբ սիրո և նրան կորցնելու վախի վրա, առավել մեծ է վախի ազդեցությունը, երբ զուգընկերոջ կորուստը ընկալվում է որպես ամբողջ կյանքի կործանում, նույնիսկ նրա այն ոլորտները, որոնք զուգընկերոջից կախում չունեն: Ամուսնական

անհավատարմությունը միշտ շոշափում է անձի արժանապատվությունը: Բարձր ինքնագնահատական ունեցող անձանց մոտ դիտվում է խանդի ապրման բռնատիրական ձևը, իսկ ցածր ինքնագնահատականի դեպքում անձը ավելի սուր կերպով է ընկալում իր անլիարժեքությունը: Բացի այդ, որոշ անձանց մոտ նկատվում է արտահայտված սեփականատիրական հարաբերություններ իրերի և անձանց նկատմամբ: Այս դեպքում դավաճանությունը սպառնում է ոչ միայն ամուսնական կապերին,այլև սպառնում է իրային աշխարհի կայունությանը: Ամուսնական անհավատարմությունը բարդ և նուրբ խնդիր է, քանի որ դավաճանությունը վտանգում է ընտանիքի ամբողջականությունը, շոշափում է ընտանիքի կարևոր հիմքերը ՝ ամուսնական զգացմունքները , տեղափոխվում է ընտանեկան կյանքի այլ ոլորտներ / տնտեսական, կենցաղային, ժամանցային/ ուղեկցվում է խանդով, որն էլ ընտանեկան դրամայի մեջ բերում է խոր աֆեկտներ: Ծայրահեղ դեպքում, երբ դավաճանության իրավիճակը չի լուծվում, ամուսինները չեն կարողանում վերացնել կոնֆլիկտը, տանել դավաճանությունը, ինչն էլ, ի վերջո, հանգեցնում է ամուսնալուծության:

Ընտանեկան հարաբերություններում շատ կարևոր են խառնվածքային առանձնահատկությունները, բնավորությունը, արժեքային կողմնորոշումները: Խառնվածքային առանձնահատկությունների տարբերությունները կարևոր են ամուր, երջանիկ հարաբերություններ կառուցելու, միմյանցից շուտ չհոգնելու, հասկացված, սիրված լինելու համար: Փաստ է, որ երբ տղամարդը խոլերիկ է, իսկ կինը՝մելանխոլիկ, այդ ընտանիքներում չի բացառվում կոնֆլիկտայնությունը:

Անհատի խառնվածքի և բնավորության գծերը , սովորությունները, զգացմունքները, կամքը,հետաքրքրություններն ու դրդապատճառները և այլ որակներ մեծ դեր են խաղում ի հայտ եկող կոնֆլիկտի դինամիկայում և եթե ամուսինները տարբերվում են նաև իրենց մտածելակերպով և արժեքային համակարգով, ապա կոնֆլիկտ առաջացնող հենց անձնային գործոնն է դոմինանտ դեր խաղում: Ընտանեկան լուրջ

դժվարությունների և ամուսնալուծությունների պատճառ կարող է հանդիսանալ ամուսինների բնավորության տարաբնույթ շեշտվածությունը և պսիխոպաթիկ գծերի առկայությունը: Պսիխոպաթիայի համար բնորոշ են անձի խառնվածքի և բնավորության ախտաբանական խախտումները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ընտանիքը հասարակության անբաժանելի բջիջն է: Ոչ մի ազգ, ոչ մի քաղաքակիրթ հասարակություն առանց ընտանիքի չի կարող գոյատևել: Ընտանիքի կարևոր սկզբունքը ամուսնական, ծնողական, որդիական, աղջկական սերն է միմյանց նկատմամբ: Ընտանիքը հարաբերությունների ավելի բարդ համակարգ է, քան ամուսնություն կոչվածը, քանի որ այն միավորում է ոչ միայն ամուսիններին, այլ նաև իրենց երեխաներին, բարեկամներին կամ պարզապես ամուսիններին մտերիմ ու նրանց անհրաժեշտ մարդկանց: Ընտանիքը բնութագրվում է հետևյալ կերպ.

1. ընտանիքը հասարակության կորիզն է
2. ընտանիքը անհատական գոյության կարևորագույն ձևն է
3. ընտանիքը ամուսնական միություն է
4. ընտանիքը ամուսինների բազմակողմանի հարաբերություններն են բարեկամների հետ, որոնք ապրում են տվյալ ընտանիքում՝ ծնողների, քույր-եղբայրների, տատիկ-պապիկների և այլն:

Ընտանիքը՝ որպես փոքր խումբ, իր անդամների պահանջմունքները բավարարելու նպատակով կատարում է մի շարք ֆունկցիաներ, որոնք սերտորեն կապված են ընտանիքի ինստիտուտի ֆունկցիաների հետ՝ ընտանեկան ամբողջականության ձևավորման, համատեղ գործունեության իրականացման և կազմակերպման, երեխաների դաստիարակության, կենցաղ-տնտեսական,

ընտանեկան հանգստի կազմակերպման, «թերապևտիկ» կամ հոգեբանական «ապաստանի» ֆունկցիաներ:

Որպես կանոն՝ ընտանեկան կյանքը ոչ միշտ է հանդիսանում ուրախության աղբյուր, այն չի կարող միշտ հարթ և հավասար ընթանալ, կան ոչ քիչ թվով ընտանեկան դժվարություններ, որոնց հաղթահարումը ընտանիքի անդամների կողմից երբեմն լինում է անհնար: Այս դժվարությունները մեկնաբանվում են որպես պսիխոտրավմատիկ գործոններ: Ընտանիքում ստեղծվում է բացասական հոգեբանական մթնոլորտ: Այս պայմաններում ամուսինների միջև վեճերն ու կոնֆլիկտները ձեռք են բերում առավել ավերիչ ուժ: Դրանց հետևում կանգնած են թաքնված, խորքային սոցիալ-տնտեսական և սոցիալ-հոգեբանական գործոններ, որոնք կարող են կործանել ընտանեկան կյանքը: Շատ հաճախ լարվածությունը, որն առաջանում է ընտանեկան կյանքի օբյեկտիվ դժվարություններից, դառնում է խրոնիկ, իսկ բացասական հույզերը՝ մշտական և կայուն: Ամուսիններից յուրաքանչյուրի մեջ կուտակվում է ամուսնական կյանքի անբավարարության զգացում: Աստիճանաբար ամուսիններից մեկը դառնում է այն ոչ բարենպաստ պայմանների մեղավորը, որում հայտնվել է ընտանիքը:

Ընտանեկան կոնֆլիկտների լուծման ուղիներն ու միջոցները, թերապևտիկ հնարները բազմազան են:

Օգտագործված գրականության ցանկ

1. ՀովհաննիսյանԱ. Ամուսնա-ընտանեկան իրավունքը վաղ ավատական Հայաստանում, Երևան,1976
2. Զացեպին Վ. Ամուսնական կյանքի մասին, Երևան, 1981
3. ШнейдрЛ. Б.՝Психология семейных отношений՝Москва 2000г
4. АнтоновА. Н.Семьяивремья. М. 1997
5. Skolnick A. The Intimate Environment Exploring marriage and the Family, Boston, Little Brown and Company, 1973
6. ЯнковаЗ.А.Городскаясемья, Москва, Наука,1979
7. Խարչև Ա. Գ. Մացկովսկի Մ. Ս.,Ժամանակակից ընտանիքը և նրա պրոբլեմները, Երևան, «Հայաստան»,1982
8. Cheal D., Family and The State of Teory,Harvester Wheatsheaf, 1991
9. *КарабановаО. А.*Психологиясемейныхотношений:Учебноепособие. —Самара: ИздательствоСИОКПП, 2007. — 122 с.
10. ШнейдерЛ. Б.Семейнаяпсихология: Учеб.пособиедлявузов-Изд. 3-е.: АкадемическийПроект: Екатеринбург: Деловаякнига, 2007.-736с.
11. АндрееваТ. В.Семейная психология: Учеб.пособие. —СПб.: Речь, 2004. —244 с
12. Նալչաջյան Ա. Ա. «Սոցիալական հոգեբանություն», Երևան 2004թ.

13. ДружининВ. Н.‘Психологические типы семьи в европейской культуре’ Москва 1995г
14. ЭйдемиллерЭ. П.,ЮстицкийВ. В.‘Семейная психотерапия’Ленинград 1990г
15. БарканА. С.‘ Его величество ребенок’Москва,1996
16. Նալչաջյան Կ. Ա. «Ընտանիքի կյանքի փակ էջերը», Երևան 2003թ.
17. Дивицина Н. Ф.‘Семьеведение’Москва 2006г
18. Хоментаускас Г. Т.‘Семья глазами ребенка’Москва 2003г
19. Практиечская психология: от фундаментальных исследований до иновации ’Международная науно–практическая конференция,Тамбов 2007г.
20. Սեղրակ. Ա. Սեղրակյան «Ընտանիքի հոգեբանություն», Երևան,2010